

тоталитарной семье, при феодально-патриархальном существовании это было не обязательно. Думается, именно в этом следует искать причину своеобразного разлада большой семьи, при котором для ведения комплексного хозяйства совместно проживали семьи двух братьев, что мы наблюдали в армянских селениях Ваншадзора. Отсюда вытекает необходимость учета особенностей хозяйства при изучении больших семей. Исследования Р. Л. Харадзе показали, что виды семейных общин в Грузии варьировали в зависимости от занятий населения.²⁶ Р. Л. Харадзе выделяла следующие основные виды грузинской семейной общины: с преимущественно земледельческим хозяйством, с преимущественно скотоводческим хозяйством; с симбиозным хозяйством. Автор убедительно показывает, что отгонная форма скотоводства объективно способствовала сохранности больших семей.²⁶

В своеобразных условиях отгонного скотоводства было меньше оснований для припущения роли женщины. В историко-этнографической литературе²⁷ давно было указано на высокое положение старшей в семье женщины (тантукни), ведавшей всеми домашними делами и пользовавшейся большим авторитетом среди всех остальных членов семьи. Хотя в армянской семье было безраздельное господство главы семьи, тем не менее сильны были и

пережитки матриархата, нашедшие отражение в свадебных и других обычаях.

В рассматриваемое время как в самом селении, так и на летовке ведение молочного хозяйства было возложено на тантукни. Значительная роль молочного хозяйства в экономике армян при отгонном скотоводстве и руководящая роль женского труда в нем повышали роль женщины в семье, права и обязанности которой определялись, как правило, экономическим значением ее труда. С этой точки зрения, большой интерес представляет сравнительное изучение семейной общины и положения женщины при ведении различных форм скотоводства, что позволит выявить новые дополнительные материалы для всестороннего изучения семьи и семейных отношений у армян во второй половине прошлого столетия.

Высокое положение женщины в условиях развитого молочного хозяйства было отмечено и у ряда этнографических групп грузинского народа.²⁸

Приведенные материалы выявляют генетические связи многих элементов материальной культуры, производственного и семейного быта армян с различными способами ведения скотоводческого хозяйства, что, несомненно, указывает на большую значимость их учета при объяснении первых. Дальнейшее исследование всего комплекса вопросов, связанных с выявлением роли форм скотоводства в сложении тех или иных сторон быта, позволит глубже изучить многие этнографические аспекты жизни армянского народа.

²⁶ См. Р. Л. Харадзе, указ. раб., т. 1, стр. 152, 154, 190; В. М. Шахматов, указ. раб., стр. 27.

²⁶ См. Р. Л. Харадзе, Грузинская семейная община, т. II, Тбилиси, 1960—1961.

²⁷ См. там же, т. I, стр. 41 и сл.

²⁸ См. Н. П. Надеждин, Кавказский край, Тута, 1895, стр. 142; Г. Ф. Чурин, Армяне Закавказья, Тифлис, 1931, стр. 242—243 и др.

ՅՈՒ. Ի. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԱՆՍԱՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(XIX դարի երկրորդ կես—XX դարի սկիզբ)

Ա մ փ ո ւ ի ո մ

Պատմա-ազգագրական այս հետազոտությունը նվիրված է հայերի անասնապահության ձևերի ուսումնասիրմանը՝ XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի սկզբներին ընկած ժամանակաշրջանից. բուն, ազգագրորդներով խնդրես տարրեր պատմական գործընթացների, այնպես էլ մեր հարևան ժողովուրդների համեմատական նյութի:

Երկրագործականը գուգահեռ, անասնապահությունը նույնպես եղել է հայերի հնագույն գրավորներից մեկը, որի մասին են վկայում

հնագիտական, վիմագրական, պատմագրական, բանահյուսական և ազգագրական բազմաթիվ նյութեր: Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները նպաստել են անասնապահության զարգացմանը և նրա պարավոր պատմության ընթացքում ստեղծվել են անասնապահության ավանդական եղանակներ ու ուղիատանրի կազմակերպման ձևեր, գտնական սովորույթներ ու ծեսեր, որոնց ուսումնասիրումը կուրտուր-պատմական տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում:

Հայ աղգաբարձական գրականության մեջ հայերի անասնապահական մշակույթի առանձնահատկությունները թույլ են արտացոլվել: Իսկ Կովկասի ժողովուրդների անասնապահությանը վերաբերող գրականության մեջ անասնապահության ձևերը մինչև օրս հատուկ ուսումնասիրման առարկա չեն գարձել, չնայած նրան, որ այսօր առաջնակարգ տեղ է տրվում հատկապես անասնապահության պատմա-համեմատական և տիպարանական ուսումնասիրման խնդիրներին:

Աշխատության համար հիմնական աղբյուր են հանգիսացել աղգաբարձական գաղափարներ, որոնք հավաքվել են հեղինակի կողմից Հայաստանի տարբեր պատմա-աղգաբարձական շրջաններում 1960—1968 թթ., լայնորեն օգտագործվել են նաև պատմական, սնտեսագիտական, գյուղատնտեսական գրականությունն ու արխիվային տվյալները:

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում ընկած Արևելյան Հայաստանը ֆիզիկա-աշխարհագրական, տնտեսական, պատմական և աղգաբարձական առանձնահատկությամբ բաղադրված է. որը և կանխորոշել է անասնապահության պատմականորեն առաջացած ձևերը: Հայերի տնտեսության հիմքը ամենուրեք երկրագործությունն է եղել, որն ինքնին ենթադրում է նաև համեմատաբար դարգացած անասնապահություն: Վերջինս առավել դարգացում է ունեցել այնտեղ, ուր շատ են եղել լեռնային արոտավայրերը:

Ձանաղան աղբյուրների տվյալները վկայում են հնարավորության սահմաններում տարբեր անասունների պահելու ավանգույթը, որը թելադրվում էր երկարամյա փորձով ու նպատակահարմարությամբ: Առանձնապես դարգացել է խոշոր եղջերավոր անասնապահությունը՝ կապված երկրագործական տնտեսության հետ:

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հայերը կիրառել են հիմնականում երկու՝ նստակյաց և հեռագնաց անասնապահության ձևերը:

Նստակյաց անասնապահության ատարժման արեալը Արևելյան Հայաստանում ընդգրկել է ֆիզիկա-աշխարհագրական և տնտեսական տեսակետից տարբեր տարածություններ՝ առավել ցածրագիր և ալպիական ու մերձալպիական մարգագետինների գոտում կամ գրանց հարող տարածքներում գտնվող բարձր լեռնային մասերը: Այդ մասերից յուրաքանչյուրի տարեկան անասնապահական ցիկլի առանձնահատկությունների ուսումնասիրությունը հիմք է ապրիս առանձնացնելու անասնապահության նստակյաց ձևի երկու՝ հարթա-

վայրային (կամ հովտային) և լեռնային ենթատիպերը:

Նստակյաց անասնապահության հովտային ենթատիպը ձևավորվել է առավելապես Արարատյան հովտի հայկական գյուղերում և պայմանավորված է եղել աղի գալուստավարա-ալպեգործական տնտեսության ամրոց կոմպլեքսով, որը պահանջում էր երկրագործական մշտական աշխատանքներ: Տրվյալ ենթատիպի ընդհանուր գիծն էր բոլոր տիպի անասունների պահումը հիմնական բնակավայրերի շրջանում կլոր տարին՝ կիրառելով առանձին տեսակի հողատարածություններում անասունը պարբերաբար արածեցնելու մշակված կարգը:

Նստակյաց անասնապահության լեռնային ենթատիպը ձևավորվել է Շիրակի, Գեղարքունիքի, Ջավախքի, Արցախի, Այուրիքի բարձր լեռնային մասերում և այլուր: Լեռնային արոտավայրերի մոտակիկությունը հնարավորություն է տվել բոլոր տիպի անասունների արածեցման կալմակերպումը գյուղամերձ հողատարածքների սահմաններում՝ առանց այն հեռավոր արոտավայրերը տեղափոխելու:

Հեռագնաց անասնապահության հիմնական կենտրոններ են հանգիսացել Շիրակի, Գեղարքունիքը, Ջավախքը, Վայոց-ձորը, Արագածոտնը, Սյունիքը, Արցախը, Տավուշը, Լոռին, րացառյալ այդ շրջանների բարձր լեռնային մասերը:

Առավելապես անտառապարկ բարձրագիր վայրերում (Շիրակ, Գեղարքունիք, Ջավախքի մեծ մասը և այլն) կիրառվել է հեռագնաց անասնապահության ալպիական ենթատիպը, որի ընդհանուր կողմերն են եղել բոլոր տիպի անասունների պահումը գյուղում կամ նրա շրջակայքում աշնանը, ձմռանն ու դարձանը և նրանց հեռացումը ամռանը (րացառությունը բանող անասունների) լեռնային արոտավայրերը, ընտելության մի մասի տեղափոխումով (սուավելապես՝ անասնապահներ, կանայք և երեխաներ)՝ ամառանոցում անասունները խնամելու և կտթնատնտեսությունը վարելու նպատակով:

Ուրիշ վայրերում (Արագածոտն, Շիրակի մի մասում, որը հարում է Արագածի լեռնափստմին) անասնապահության վերոհիշյալ ձևեր ներկայանում է «աղուտներ» ենթատիպով, որի ընդհանուր կողմերն են եղել անասունների խնամքը ձմռանը գյուղում, մասնա եղջերավոր անասունների հեռացումը վաղգարնային և ուշաշնանային արոտավայրերը («աղուտներ») և անասունների ամառային պահումը կամ գյուղամերձ արոտա-

վայրերում, կամ թե հեռավոր լեռնային արոտավայրերում:

Որոշ վայրերում էլ (Տալուշ, Լոռի, Արցախ, Սյունիք, Վայոց-ձորի և Զափախի մի մասում) անասնապահության հեռադնաց ձևը ներկայանում է «ձմեռանոց» ենթատիպով, որի բնորոշ կողմերն այն են, որ անասունների իմնական մասի խնամքը իրականանում է ձմեռանոցներում, գլուղից համեմատաբար ոչ հեռու տարածության վրա, մոտակա արոտավայրերում դարձանա-աշխանային շրջաններում և լեռնային արոտավայրերում ամռանը:

Ազգապարական տվյալները որոշակիորեն ցույց են տալիս, որ հայերը իրականացրել են անասնապահության ինտենսիվ ձևեր, որոնց բնորոշ ազգացույցներն են եղել ցանավի հագաստարածությունների մեծ մասշտաբները, լեռնային ղեռակների և ջրահոսների սգաստարածումը ինչպես ցանավի, այնպես էլ բնական մարդաղեղանիների ռոտուման համար, որպես կերի պաշարներ տեխնիկական, հայտնաբերական, աշխարհագրականոցային կուլտուրաների մնացորդներ կուտակելը, մարդաղեղանիները պարարտացնելը: Մշտական անասնապահական շինություններ կառուցելու պրակտիկան ինչպես զուգում, այնպես էլ սեզոնային արոտավայրերում և այլն:

Քաղում դարերի ընթացքում ոչակված արտապարական հմտությունների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը հաջողությամբ կարելի է կիրառել նաև մեր օրերում: Հասկապես զա վերաբերում է արոտավայրերի տեղամասերի արտաձեցման կարգին, անասունների և արոտավայրերի խնամքին և այլն:

Բնութագրելով պատմական տեղայնում Արեւելյան Հայաստանի անասնապահության դարգուցման տեղեկացները, նշվում է, որ այդ դարգացումը ընթացել է երկու հիմնական ուղղությամբ: Սի ուղղությունը, զա նստակյաց անասնապահությունն է, որի զեղրում զգալի զարգացում է աղրել՝ կապված միայն երկրագործական կուլտուրայի տարրերի հետ, իսկ երկրորդ՝ անասնապահության հետադնաց ձևի տարգացումն է, որը տեղի է ունեցել զեռես մ. թ. ա. 3-րդ հարարամյակում:

Ներկա աշխատանքի խնդիրների տեսանկյունից կարեոր նշանակություն ունի նաև անասնապահական տնտեսության մեջ աշխատանքի կադմակերպման կարգի ուսումնասիրումը: Այդ տեսակետից առանձին հետադրերություն են ներկայացնում անասուններն արածացնելու համար ստեղծ-

ված ընկերակցությունները (հարի հագաստանասնապահների անասնապահ և հագասնապահ վարձակալման ձևերը: Նյութերը հարավ-արևելք են տվել առանձնացնելու ընկերակցությունների նյութի իմնական ձև՝ կարողությունը հավասար ազգականների ընկերակցություններ, կարողությամբ հավասար արևանների ընկերակցություններ, և կարողությամբ տարրեր արևանների ու ազգականների ընկերակցություններ: Անասուններ աբածացնելու համար ընկերակցությունների ձևերի ազգագրական ուսումնասիրումը հնարավորություն է տվել բացահայտելու հասարակական կադմակերպությունների արիաիկ ձևերի այն մնացուկները, որոնք XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին զեռես պահպանվել էին հայկական գյուղում:

Հովիվների և նախարապանների վարձակալումը կատարվում էր ինչպես առանձին ունեոր տնտեսությունների, այնպես էլ տնտեսությունների իւրմբերի կամ զյուղի ամբողջ հասարակության կողմից: Համեմատական տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ հայերը առավել, բան հարեան որեւէ ժողովուրդ, կիրառել են տարրեր կարգի անասնապահների վարձակալում ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներից: Այնուհետև, հայերը աւելի, բան ուրիշ ժողովուրդներ, իրականացրել են տարրեր կարգի տնտեսապահների վարձակալում զյուղական ամբողջ հասարակության կողմից, որը, բոտ երեւոյթին, վկայում է հուկական զուգում համալնական սկզբունքների կենսունակության մասին XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Որոշ առանձնահատկությունը նրանում է, որ հայերը աւելի, բան Անգլիկոկապի այլ ժողովուրդներ, կիրառել են տարրեր կարգի անասնապահների աշխատանքի վարձատրումը (ինչպես խոշոր, այնպես էլ մանր եզերաւսր անասունների, ձիերի, խոզերի) հացահատիկով, առավելապես ցորենով ու զարիով, որը կարծում են, արտացոլում է երկրագործական ժողովրդի հնագույն ավանդույթները:

Ազգապարական նյութերի և բանահյուսական տվյալների, ժողովրդական հավատալիքների, զեկարվեստական գրականության համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բնութագրելու անասնապահների զերն ու տեղը հայկական գյուղում: Հատկանշական է, որ փորձված ու հմուտ հովիվները հարգանք ու պատիվ են վայելել առավելապես այն շրջաններում, ուր տարածված է եղել հեռադնաց անասնապահության ձևը:

նյութական մշակույթի մի շարք տարրեր բացատրվում են խնամակալության համապատասխան ձևերի կիրառմամբ: Դա վերաբերում է ընակավայրի ախպերին, կաթնատնտեսական սպասարին, յուբաճատուկ հագուստին, սննդին և այլն: Աշխատության մեջ ընկալվում է ընակավայրերի երեք ախպ, Առաջին տիպին են վերադրվել սուավելապես անտառային գոտու ընակավայրերը, որոնք բնութագրվել են գյուղից բացի նաև երկու սեզոնային բնակատեղիներով ամռանն ու ձմռանը անասունները պահելու համար: Սա կապված է այդ գոտում հեռագնաց անասնապահության «ձմեռանոց» ենթատիպի կիրառման հետ: Երկրորդ տիպին վերադրվել են գերադասապես նախալեռնային անտառադուրկ գոտու ընակավայրերը, որոնք բնութագրվել են նույնպես գյուղից բացի սեզոնային բնակատեղիներով, սակայն միայն ամառային, որը բացատրվում է այստեղ հեռագնաց անասնապահության ալպիական ենթատիպի կիրառմամբ: Եվ վերջապես, երրորդ տիպով առանձնանում են այն բնակավայրերը, որոնք յուբաճատուկ են հիմնականում հարթավայրային և բարձր լեռնային գոտուն: Սրանք նախկինում ձևավորվել են անասնապահության կիրառման հեռանկարով սիլվոնային բնակատեղիներ շունեն: Բնա-տնտեսական ընդհանուր պայմանների գնահատում որոշ ամառանոցներ և ձմեռանոցներ վերաժվում էին գյուղերի:

Անասնապահության ձևերի տեղեկացությունը պզ-

լիորեն կարելի է նկատել նաև ընտանեկան կենդանու, Ինչպես հայտնի է, հեռագնաց ձևի անասնապահության կիրառումը ենթադրում էր նաև բնակչության մի մասի տեղափոխումը սեզոնային բնակատեղիները, իսկ այդ բնականաբար, նպաստում էր մեծ ընտանիքների՝ դերդաստանների պահպանմանը: Երկրագործական տնտեսությանը դուգահեռ անասնապահության հեռագնաց ձևի կիրառումը անցյալում հնարավոր էր միայն բաղմանդամ ընտանիքների առկայության դեպքում, մի բան, որի անհրաժեշտությունը չկար նստակյաց անասնապահության կիրառելիս:

Այս ամենից բացի, հայերի անասնության մեջ կաթնատնտեսության զգալի տեղը հեռագնաց անասնապահության դեպքում և այդ դործում կնոջ դեկավար դերը՝ բարձրացնում էին նրա հեղինակությունը, որի իրավունքներն ու պարտականությունները գերգաստանում ընդունվում էին հենց կնոջ աշխատանքի ընկալում:

Բոլոր այս տվյալները համոզիչ կերպով բացահայտում են հայերի նյութական մշակույթի, արտադրական և ընտանեկան կենցաղի բաղմամբ տարրերի պայմանավորվածությունը անասնապահության կիրառման ձևերով, որը նշանակալի հիստորիություն է ներկայացնում հայ ժողովրդի պատմության և ազգայնության ուսումնասիրման տեսակետից: